

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

ԵՎ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇՆԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն և Ամերիկայի Միացյալ Նահանգների արդարադատության դեպարտամենտի քննությունների դաշնային բյուրոն, այսուհետև՝ «Կողմեր»,

գիտակցելով, որ անդրազգային հանցավոր գործունեությունը կարող է շատ իրական վտանգ ներկայացնել երկու երկրների ժողովուրդների կայունության, անվտանգության և շահերի համար,

ճանաչելով անդրազգային հանցավորության դեմ համապարփակ պայքարում միջազգային իրավապահ մարմինների բոլոր մակարդակներում համագործակցության ամրապնդման անհրաժեշտությունը,

ճանաչելով երկու երկրների ինքնիշխանությունը,

գործելով գործընկերության և համագործակցության ոգով,
հանգել են հետևյալ փոխըմբռնման.

Հոդված 1

Նպատակ

Կողմերն ընդունում են, որ անդրազգային հանցավորության աճող սպառնալիքի կանխարգելումը միջազգային համագործակցություն է պահանջում: Կողմերը մտադիր են ամրապնդել և համախմբել համագործակցությունը տեղեկությունների փոխանակման, համակարգված գործողությունների իրականացման և համագործակցության վրա հիմնված օգնության ոլորտներում: Սույն Հուշագիրը հիմնվում է Կողմերի միջև առկա համագործակցային հարաբերությունների վրա՝ խրախուսելու 3-րդ հոդվածով սահմանված համատեղ գործունեությունը՝ 2-րդ հոդվածում ամրագրված առաջնային քրեական հարցերի լուծման նպատակով:

Ոլորտային համագործակցությունը կարգավորող այս, ոչ պարտադիր Հուշագիրը կոչված է հակասելու փոխադարձ իրավական օգնության մասին բազմակողմ պայմանագրերի դրույթներին, որոնց մասնակից են ինչպես Ամերիկայի Միացյալ Նահանգները, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունը:

Հոդված 2

Համագործակցություն

Սույն Հուշագրի դրույթների իրականացման նպատակով Կողմերը մտադիր են համագործակցել հետևյալ ոլորտներում.

1. Անօրինական միգրացիայի բոլոր ձևերը, այդ թվում՝ թրաֆիքինգ:
2. Կիբեռհանցավորություն:
3. Առևանգումներ:
4. Հանցավոր կազմակերպություններ:
5. Տնտեսական, ֆինանսական և բանկային ոլորտներում անօրինական միջազգային գործունեություն, այդ թվում՝ փողերի լվացում:
6. Այլ քրեական հարցեր, որոնք երկուստեք կսահմանվեն երկու Կողմերի կողմից:

Կողմերը նաև մտադիր են աջակցել համատեղ գործունեությանը, որը կարող է ներառել հետևյալ ոլորտները.

1. Համակարգված օպերացիաներ:
2. Իրավապահ ոլորտում տեղեկությունների փոխանակում:
3. Կողմերի միջև գոյություն ունեցող համագործակցային կապերի ամրապնդում և համախմբում:
4. Կարողությունների զարգացման և մասնագիտական զարգացման ոլորտում համագործակցային աջակցություն:

Հոդված 3

Համագործակցության զարգացում

Կողմերն ակնկալում են, որ սույն Հուշագիրը չի խանգարի իրենց մասնակցել երկուստեք ընդունելի այլ միջոցառումներին և համագործակցության ձևերին՝ սույն Հուշագրի 1-ին հոդվածին համապատասխան:

Հոդված 4

Համագործակցության եղանակները

Սույն Հուշագրի շրջանակներում տեղեկությունների փոխանակումը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալ տեղեկություններով.

- 1) փոխադարձ իրավական հարցումների կատարում,
- 2) հետախուզական տվյալների, տեղեկությունների և վերլուծության փոխանակում,
- 3) փոխադարձ խորհրդատվություն,
- 4) համատեղ օպերատիվ խմբերի ձևավորում,
- 5) հանցավոր գործունեության դեմ պայքարի նոր մեթոդներով փորձի փոխանակում,
- 6) տեխնոլոգիաների և սարքավորումների բնագավառում վերջին ձեռքբերումների մասին տեղեկության փոխանակում,
- 7) համագործակցության բնագավառներին վերաբերող մասնագիտական փորձի, ազգային օրենսդրության ակտերի, բաց գիտական և մեթոդական գրականության փոխանակում,
- 8) անձնակազմի մասնագիտական կարողությունների բարձրացման նպատակով վերապատրաստման և փորձի փոխանակման համատեղ ծրագրերի իրականացում:

Հոդված 5

Օգնություն տրամադրելու մասին հարցում

Կողմերը մտադիր են սույն Հուշագրի հիման վրա համագործակցություն իրականացնել օգնություն ցուցաբերելու հարցման հիման վրա կամ Կողմերի նախաձեռնությամբ, որը ենթադրում է, որ նման օգնությունը հետաքրքրություն է ներկայացնում մյուս Կողմի համար:

Օգնության հարցումները սովորաբար ուղարկվում են գրավոր: Հրատապ դեպքերում հարցումները կարող են փոխանցվել բանավոր, բայց ակնկալվում է, որ դրանք կհաստատվեն գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային փոստով կամ նմանատիպ էլեկտրոնային միջոցներով:

Ակնկալվում է, որ օգնության հարցումը կպարունակի.

- 1) օգնություն հայցող Կողմի կողմից նշանակված պաշտոնատար անձի պաշտոնը, անվանումը,
- 2) հարցման հիմնավորվածության շարադրանքը,
- 3) հարցման նպատակը և իրավասությունը,
- 4) պահանջվող օգնության բովանդակության նկարագրությունը,
- 5) ցանկացած այլ տեղեկություն, որը կարող է օգտակար լինել հարցումը պատշաճ կատարելու համար:

Կողմերը մտադիր են ժամանակին կատարել մյուս Կողմի հարցումը: Հարցման պատասխանի ողջամիտ ժամկետն ակնկալվում է, որ չի գերազանցի 30 օրը, եթե հարցման մեջ այլ ժամկետ սահմանված չէ:

Եթե հնարավոր չէ կատարել կամ ժամանակին կատարել օգնության հարցումը, ապա հարցումը ստացած Կողմը կփորձի օպերատիվ կերպով տեղեկացնել մյուս Կողմին մերժման կամ ուշացման պատճառների և հարցման կատարման ակնկալվող ժամկետի մասին:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է մասնակիորեն կամ ամբողջությամբ հրաժարվել կատարել հարցումը սույն Հուշագրի 6-րդ հոդվածին համապատասխան:

Սույն Հուշագիրը նախատեսված չէ անձանց հանձնման կամ քրեական գործերով փոխադարձ իրավական օգնության պաշտոնական տրամադրման հետ

կապված հարցերի լուծման համար, այդ թվում՝ այդպիսի օգնության տրամադրումն ուղղակիորեն թույլատրող մարմինների լիազորություններին համապատասխան:

Հոդված 6

Օգնության մերժում

Կողմերն ընդունում են, որ Կողմերից յուրաքանչյուրը կարող է մասնակիորեն կամ ամբողջությամբ հրաժարվել կատարել սույն Հուշագրում քննարկվող միջոցառումները կամ սահմանափակել դրա կատարումը որոշակի պայմաններով, եթե Կողմերի կարծիքով համագործակցությունը կարող է բացասաբար ազդել իր պետության անվտանգությանը կամ շահերին, հակասել ազգային օրենսդրությանը կամ միջազգային պարտավորություններին, խախտել մարդու իրավունքները կամ ցանկացած այլ պատճառով, որը տեղին կհամարի:

Հոդված 7

Ստացված տեղեկության և փաստաթղթերի սահմանափակ օգտագործում

Կողմերը մտադիր են պահպանել սույն Հուշագրի շրջանակներում ստացված տեղեկությունների գաղտնիությունը:

Կողմերը կձեռնարկեն միջոցներ չօգտագործել սույն Հուշագրով ստացված տեղեկությունները, տվյալները և փաստաթղթերը սկզբնական հարցման մեջ չնշված այլ նպատակներով, ինչպես նաև միջոցներ կձեռնարկեն չփոխանցել այդպիսի տեղեկություններ, տվյալներ և փաստաթղթեր՝ երրորդ անձանց: Կողմերը սույն Հուշագրին համապատասխան տրամադրված ողջ տեղեկությունների և տվյալների հետ կվարվեն՝ տվյալ երկրում գործող օրենսդրությամբ կարգավորվող գաղտնիության նորմերին համապատասխան: Կողմերն ընդունում են, որ սույն Հուշագրում պարունակվող տեղեկությունները կարող են նույնականացնել ԱՄՆ-ի այն անձանց, որոնց վերաբերյալ տեղեկությունը պաշտպանված է 1974 թվականին ընդունված Գաղտնիության օրենքով և/կամ թիվ 12333 Գործադիր հրամանով (կամ դրան հաջորդող ցանկացած այլ Գործադիր հրամանով): Նմանօրինակ ողջ

տեղեկությունների հետ պետք է վարվել օրենքով սահմանված կարգով: Կողմերից յուրաքանչյուրը կտեղեկացնի մյուս Կողմից ստացված տվյալների օգտագործման, բացահայտման կամ չարտոնված հասանելիության յուրաքանչյուր դեպքի մասին (այդ թվում՝ տվյալների կորստի կամ արտահոսքի մասին):

Անհրաժեշտության դեպքում Կողմերը կարող են լրացուցիչ համատեղ որոշում կայացնել օպերատիվ-քննչական տեղեկատվական գործունեության հետ կապված տեղեկությունների կամ նյութերի օգտագործման կոնկրետ պայմանների և կանոնների վերաբերյալ, որոնք իրականացվում են երկկողմ հիմունքներով:

Հոդված 8

Համագործակցության համակարգումը և լեզուն

Սույն Հուշագրի դրույթների իրականացման նպատակով ակնկալվում է, որ Կողմերը միմյանց տեղեկություններ կտրամադրեն համագործակցության համակարգման համար պատասխանատու ստորաբաժանումների՝ կամ անձանց վերաբերյալ և անմիջապես կտեղեկացնեն միմյանց տվյալ անձանց անունների, իրավասությունների և կոնտակտային տվյալների հետ կապված ցանկացած փոփոխությունների մասին:

Սույն Հուշագրի համագործակցության շրջանակներում կարող են օգտագործվել անգլերեն և հայերեն լեզուները, եթե Կողմերն այլ բան չեն յուրաքանչյուր կոնկրետ գործով:

Հոդված 9

Լրացուցիչ դրույթներ

Ակնկալվում է, որ Կողմերից յուրաքանչյուրը պատասխանատու կլինի սույն Հուշագրի իրականացման հետ կապված իր սեփական ծախսերի համար, տվյալ Կողմի երկրի ազգային օրենսդրությամբ հատկացված բյուջեի շրջանակներում, եթե Կողմերն այլ բան չորոշեն յուրաքանչյուր կոնկրետ գործով՝ կոնկրետ հարցերի շուրջ: Սույն Հուշագիրն իրենից ֆինանսական միջոցների պարտավորություն չի ներկայացնում, ոչ էլ ֆինանսական միջոցների փոխանցման հիմք է հանդիսանում, այլ

պարզապես սույն փաստաթղթում տեղ գտած հարցերի շուրջ Կողմերի միջև փոխըմբռնման հիմնական հայտարարություն է իրենից ներկայացնում: Կողմերից յուրաքանչյուրի գործունեությունը կախված կլինի իր բյուջետային գործընթացներից, միջոցների և ռեսուրսների առկայությունից՝ կիրառելի օրենքներին, նորմերին և քաղաքականություններին համապատասխան: Կողմերն ուղղակի կերպով ընդունում են, որ սույն Հուշագրի ձևակերպումները որևէ կերպ չեն ենթադրում, որ ֆինանսական միջոցներ կտրամադրվեն նման ծախսերի համար:

Սույն Հուշագիրը Կողմերից ոչ մեկի համար համաձայնություն չի հանդիսանում գործող որևէ օրենքով պարտավորություն ստանձնելու կամ պատասխանատվությունից հրաժարվելու համար:

Սույն Հուշագիրը նախատեսված չէ որևէ դատարանում կամ վարչական մարմնում կիրառվելու համար: Սույն Հուշագիրը նախատեսված չէ և չպետք է մեկնաբանվի որպես որևէ նյութական կամ ընթացակարգային, օրենքով կամ այլ կերպ պարտադիր կատարման ենթակա որևէ իրավունքի կամ շահի ստեղծում՝ որևէ երրորդ կողմի կողմից Քննությունների դաշնային բյուրոյի կամ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի, Միացյալ Նահանգների կամ վերջիններիս պաշտոնատար անձանց, աշխատակիցների, գործակալների կամ նրանց հետ կապված այլ անձնակազմի նկատմամբ:

Երկու Կողմերն էլ համաձայնում են ենթարկվել բոլոր գործող օրենքներին, քաղաքականություններին և նորմերին, որոնք այլ կերպ սույն Հուշագրի ներքո կարգավորում են իրենց գործունեությունը՝ բոլոր առումներով: Սույն Հուշագիրը նախատեսված չէ, չի ավելացնում և չի սահմանափակում գոյություն ունեցող որևէ այլ իրավական լիազորություն, որից օգտվում է Կողմերից յուրաքանչյուրը:

Հոդված 10

Վեճերի լուծում

Կողմերն ակնկալում են, որ իրենց միջև ցանկացած վեճ, որը կառաջանա սույն Հուշագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման հետ կապված, կկարգավորվի խորհրդակցությունների և քննարկումների միջոցով:

Հոդված 11

Փոփոխություններ

Սույն Հուշագրում կարող են փոփոխություններ կատարվել Կողմերի գրավոր փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված 12

Փոխկապակցվածությունը միջազգային համաձայնագրերի հետ

Սույն Հուշագիրը, որը կարգավորում է ոլորտային համագործակցությունը, միջազգային պայմանագիր չէ և չունի պարտադիր իրավաբանական ուժ և կոչված չէ ազդելու Կողմերի այն իրավունքների կամ պարտականությունների վրա, որոնք բխում են այլ միջազգային համաձայնագրերից, որոնց Կողմ են Կողմերը կամ նրանց երկրները:

Հոդված 13

Սույն հուշագրի գործողության սկիզբը և դադարեցումը

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերից յուրաքանչյուրի լիազոր ներկայացուցչի կողմից ստորագրման պահից և գործելու է երեք տարի ժամկետով:

Յուրաքանչյուր եռամյա ժամկետի ավարտից հետո Կողմերը կարող են փոխադարձ համաձայնությամբ երկարացնել սույն Հուշագրի գործողության ժամկետը ևս մեկ տարի ժամկետով:


Ակնկալվում է, որ Կողմը, որը ցանկանում է դադարեցնել իր մասնակցությունը սույն Հուշագրին, պետք է այդ մտադրության մասին 30 օր առաջ գրավոր ծանուցում ներկայացնի մյուս Կողմին:

Ստորագրվել է 2023 թվականի մայիսի 16-ին երկու օրինակից՝ անգլերեն և հայերեն լեզուներով:

Հայաստանի Հանրապետության
քննչական կոմիտեի անունից

Ամերիկայի Միացյալ Նահանգների
արդարադատության նախարարության
հետաքննությունների դաշնային
բյուրոյի անունից

ՀՀ քննչական կոմիտեի
Նախագահի տեղակալ
Արսեն Այվազյան



ՀԴԲ իրավական կցորդ
Հայաստանում և Վրաստանում
Հեղեր'Բերգ

